ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բուֆետի տարածքի վարձակալության

«Երևանի Գ.Գյուլբենկյանի թիվ190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝

դպրոցի բուֆետի տարածքը վարձակալության հանձնելու նպատակով

- մրցույթի անցկացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը՝ 30.10.2026թ.,ժամը 12$^{\underline{00}}$
- մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը)՝ «**Երևանի Գ.Գյուլբենկյանի թիվ190 ավագ դպրոց» ՊՈԱԿ**
- մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն)՝ ք. Երևան, ՀԱԹ Բ-2 Ա. Բաբաջանյան 133/3, «Երևանի Գ.Գյուլբենկյանի թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ
- մրցույթի հաղթողին որոշելու կարգը՝ հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմանները
- մրցույթով վարձակալության տրվող տարածքի անվանումը, մրցույթի պայմանները՝ Բուֆետ, տարածքի մակերեսը՝ **20.18** քմ
- մեկնարկային վարձավճարը՝ ըստ 614-ն որոշման 8 կետի կազմում է **51500 /հիսունմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ** դրամ որը համարվելու է ամսական վճար:
- Մրցութային առաջարկները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոքր չլինեն պետական գույքի վարձակալության տրամադրման մասին համապատասխան իրավական ակտով սահմանված նվազագույն արժեքից
- վարձակալության նախատեսվող ժամկետը՝ 3 տարի, բացառությամբ հունիս, հուլիս և օգոստոս ամիսների, երբ ուսումնական գործընթաց չի իրականացվում
- մրցույթին կարող են մասնակցել իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն՝
  - ✓ սննդի կազմակերպման ոլորտում առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային փորձ,
  - ✓ պարտավորվում են գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:
  - ✓ Բուֆետի գործունեությունը պետք է ամբողջությամբ համապատասխանի ՀՀ առողջապահության նախարարի N 32-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ և սննդի կազմակերպման պահանջներին

Հաղթող մասնակիցը պարտավորվում է՝

- մինչև գործունեության մեկնարկը սեփական միջոցներով կատարել տարածքի անհրաժեշտ վերանորոգման աշխատանքները, մասնավորապես՝
  - դռան փոխարինում
  - պատուհանի փոխարինում
  - ներքին հարդարման աշխատանքների իրականացում
- տարածքն ամբողջությամբ ապահովել անհրաժեշտ գույքով և սարքավորումներով, այդ թվում՝
  - ցուցադրական սառնարան
  - ցուցափեղկեր
  - գործունեության համար անհրաժեշտ այլ գույք և տեխնիկական միջոցներ
- վճարել տարածքի օգտագործման հետ կապված բոլոր կոմունալ ծախսերը
- կրել օրենքով նախատեսված պետական վճարները, հարկերը և այլ պարտադիր վճարները,
- պահպանել դպրոցի ներքին կարգապահական կանոնները, անվտանգության և սանիտարահիգիենիկ պահանջները
- ապահովել, որ վաճառվող սննդամթերքը լինի անվտանգ, որակյալ, փաթեթավորված, մակնշված և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառվող
- վաճառել միայն օրինական ծագում ունեցող, համապատասխան փաստաթղթերով հավաստված (անհրաժեշտության դեպքում՝ լիցենզավորված կամ համապատասխանության փաստաթղթերով ապահովված) արտադրանք
- պահպանել ողջ գործունեության ընթացքում առողջապահական և սննդամթերքի անվտանգության նորմերը

- Վաճառվող ապրանքների գները պետք է լինեն ողջամիտ և սոցիալապես ընդունելի՝ հաշվի առնելով, որ ծառայությունը նախատեսված է սովորողների և դպրոցի աշխատակիցների համար

Մրցույթի մասնակցության հայտին կից՝ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես՝

ա. գրավոր գնային առաջարկ

բ. նախավճարի մուծումը հաստատող անդորրագիր՝ **51500 /հիսունմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ** դրամ

դ. իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի պատճենը,

ե. հայտատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիրը (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը).

Տարածքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ կարող են հրապարակվել լրացուցիչ տեղեկություններ.

ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Տարածքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ընդունման ժամկետում:

Տարածքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերը՝ մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին, ներկայացվում են սոսնձված և ստորագրված ծրարով՝ անձամբ կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտերի (ծրարները) ներկայացնելու վերջնաժամկետն է համարվում **30.10.2026թ.,ժամը 12^{00}**:

Սույն կարգի պահանջներին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտը ներկայացնողին:

Տարածքի վարձակալության մրցույթի հայտատուները, մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերը ներկայացնելու կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «Փոփոխում» բառը: Տարածքի մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտի փոփոխության կամ վերադարձման մասին դիմումները ենթակա չեն քննարկման:

Տարածքի վարձակալության մրցույթի հայտատուները հրապարակային ծանուցմամբ սահմանված կարգով, չափով ու ժամկետներում վճարում են մրցույթի մասնակցության նախավճարը՝ «**Երևանի Գ.Գյուլբենկյանի թիվ 190 ավագ դպրոց**» **ՊՈԱԿ-ի ՀՀ** կենտրոնական գանձապետարանի **900018002221** հաշվեհամարին :

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վճարած նախավճարը ներառվում է մասնակցի առաջարկած գույքի վարձակալական վճարի գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրվելու, հետագա վճարումները չկատարվելու և (կամ) պայմանագիր չկնքվելու դեպքերում՝ մրցույթը համարվում է չկայացած, իսկ վճարված նախավճարը «Երևանի Գ.Գյուլբենկյանի հ.190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ետ փոխանցվում է մասնակցի համապատասխան հաշվին:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցներին, ինչպես նաև մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուներին մրցույթի մասնակցության նախավճարը վերադարձվում է հայտատուին մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա:

Հայտերը ներկայացվում է հայերենով թղթային և էլեկտրոնային տարբերակով

Մրցույթը տեղի կունենա ք. Երևան, ՀԱԹ Բ-2 Ա. Բաբաջանյան 133/3 հասցեում, 2026 թ-ի հոկտեմբերի 30-ին ժամը 12:00-ին ներկայանալ անձնագրով և կամ լիազորագրով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյանին

Հեռախոս՝ 093-33-01-73, 094-35-65-45

Էլ. փոստ՝ school190@schools.am

Պատվիրատու՝ «Երևանի Գ.Գյուլբենկյանի թիվ190 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հավելված N 1

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	**2**	**3**	**4**	**5=3+4**
1	**բուֆետի տարածքի վարձակալություն**			

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը